ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐԸ V—XVIII ԴԴ. ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԷՋԵՐՈՒՄ

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Ն. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

Բազմատեսակ առնչությունների մեջ լինելով միջնադարյան աշխարհի տարբեր երկրների հետ՝ հայ պատմագրությունը անդրադարձել է միջնադարյան աշխարհի և հատկապես Արևելքի դրեթե բոլոր երկրների իրադարձություններին։ Հետաքրքրությունը հայ պատմագրության նկատմամբ Եվրոպայում սկսվել է դեռևս XVII դարում, երբ հայ պատմիչներն առաջին անգամ օգտագործվեցին որպես պատմական աղբյուրներ։ Ի դեպ, հայկական աղբյուրների հնագույն հրատարակությունները ևս նույն դարից են[1]։

Կղեմես Գալանոսը[2] *(XVII դար) և Անտոն Բոնուկկին*[3] *(XVIII դար) օգտագործել են հայ պատմիչներին (հատկապես Ադաթանգեղոսին) դավանաբանական վեճերի մասին գրելիս։*

XIX դարի սկզբից արդեն սկսել են զբաղվել հայ պատմագրության պատմության հետազոտմամբ, որին նվիրվել են բազմաթիվ մենագրություններ։

Մարաստանը այն հնագույն պետություններից է, որոնց մասին հայ պատմագրությունը տեղեկություններ ունի։ Մարաստանի պատմությանը նվիրված իր մենագրության մեջ Ի. Մ. Դյակոնովը[4] *օգտագործել է Մովսես Խորենացու պատմական երկը։*

Հաջորդ պետությունը, որի մասին հայ պատմիչները կարևոր վկայություններ ունեն, Արշակունյաց (Պարթևական) Իրանն է (մ. թ. ա. 250—մ. թ. 226)։ Պարսից Արշակունիների պատմության հեղինակ Մ. Ժ. Սեն-Մարտենը[5] *բազմիցս վկայակոչում է հայ պատմիչների տվյալները պարթևների պատմության տարբեր հարցեր պարզաբանելու նպատակով։ Գ. Ռաուլինսոնը և Ն. Դիբվոյսը*[6] *նույնպես օգտագործել են Մովսես Խորենացու երկը Պարթևների պատմությունը գրելիս։*

Հայ պատմիչների վկայությունները հատկապես կարևոր են սասանյան Իրանի պատմության համար։ Ք. Պատկանյանը[7] *հատուկ մենագրություն ունի,*

---

[1] *Հիրք պատմութեանց շարագրեալ վարդապետին Առաքելոյ Դաւրիժացւոյ..., վերակացութեամբ Տեառն Ոսկան Երևանցւոյ. Ամստերդամ, 1669. Գիրք աշխարհաց և առասպելաբանութեանց, որ է Ագուանգեղք. Ամստելոդամ, 1668 (էջ 3—65 Աշխարհացոյց)։ Ազգաբանութիւն տոհմին Յարեթեան... յբրինեալ ի Մովսիսէ Խորենացւոյ, Ամստելոդամ, 1695։* Moysis Chorenensis Historiae Armeniacae..., ed. Gulielmus et Georgius Whistoni filii. Londini, MDCCXXXVI (1736).

[2] Galanus Clemens. Consiliatio ecclesiae Armenae cum Romana. Roma, *I—III (1650—1664). Կղեմես Գալանոս. Միաբանութիւն Հայոց սբ. եկեղեցւոյն ընդ մեծի սբ. եկեղեցւոյն Հռովմայ. Հռոմ, Ա, Բ, 1650—1661։*

A. M. Bonucci. Istoria della vita, martirio e miracoli di S. Gregorio. Roma *1717. Պատմութիւն կենաց, մարտիրոսութեան և սքանչելեաց սրբոյն Գրիգորի. Վենետիկ, 1737։*

[4] И. М. Дьяконов. История Мидии. М.—Л., 1956, с. 42—44.

[5] M. J. Saint-Martin. Fragments d'une Histoire des Arsacides. I, Paris, 1850.

[6] G. Rawlinson. The sixth great oriental Monarchy. London, 1873. N. C. Debevoise. A political History of Parthia. Chicago, 1938.

[7] К. Патканян. Опыт истории династии Сасанидов по сведениям сообщаемым армянскими писателями. СПб., 1863. *Իր աշխատության վերջում Ք. Պատկանյանը տալիս է V*

ուր Սասանյանների դարաշրջանի պատմությունն ու մշակույթը վերլուծման են ենթարկված հայկական աղբյուրների տվյալների հիման վրա։ Նա նշում է, որ եթե նույնիսկ բյուզանդական և արևելյան (արաբական, պարսկական) աղբյուրները կորած լինեին, ապա միայն հայ մատենագիրների վկայություններ-ի օգնությամբ կարելի էր շարադրել սասանյան Պարսկաստանի ամբողջական պատմությունը։ Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Եղիշեի, Ղազար Փարպեցու և Մովսես Խորենացու տեղեկությունները անգնահատելի են Սասանյանների քաղաքական պատմության ուսումնասիրման համար, իսկ մշակութային, հատկապես կրոնական (զրադաշտականության) հարցերի հետազոտման տեսակետից Եղնիկ Կողբացին անփոխարինելի աղբյուր է։

Սասանյան Պարսկաստանի մասին կարևոր տեղեկություններ ունեն նաև վերոհիշյալներից ավելի ուշ ապրած և ստեղծագործած պատմիչները՝ Սեբեոսը, Մովսես Կաղանկատվացին (Դասխուրանցին), Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը, Վարդանը, Կիրակոս Գանձակեցին և Ստեփանոս Օրբելյանը։

Բացի պատմական աղբյուրներից, հատկապես մեծ է «Աշխարհացույցի» նշանակությունը Իրանի պատմական աշխարհագրության հետազոտման գործում։ Յ. Մարկվարտի հայտնի «Երանշահր»[8] աշխատությունը ամբողջովին հիմնված է «Աշխարհացույցի» տվյալների վրա, ընդ որում՝ «Աշխարհացույցի» հիշած ամեն մի իրանական նահանգի անունը մի գլխի վերնագիր է, որի տակ մեջ են բերվում հույն (բյուզանդացի), ասորի և արաբ մատենագիրների տեղեկությունները։

Սասանյան Իրանի պատմությանը նվիրված լավագույն մենագրության հեղինակ Ա. Քրիստենսենը[9] նշում է, որ Զենոբ Գլակի («Տարոնի պատմություն»), Փավստոս Բուզանդի, Եղնիկ Կողբացու և ուրիշների երկերը կարևոր նշանակություն ունեն այդ ժամանակաշրջանի քաղաքական կյանքի, պետական կառուցվածքի, կրոնի ու մշակույթի հետազոտման համար։ Նույնը կրկնում են նաև նորագույն ուսումնասիրողները թե՛ Սովետական Միությունում[10], թե՛ արտասահմանում[11]։

Հայկական աղբյուրները նույնքան կարևոր են նաև իրանական լեզուների ուսումնասիրման հարցում։ Իրանագետ Ի. Մ. Օրանսկին[12] ընդգծում է, որ հայ մատենագիրների տեղեկությունները կարևոր են պարսից լեզվի միջինիրանական շրջանի հետազոտման համար։

Հայ պատմիչների երկերը կարևոր տվյալներ են պարունակում նաև Բյուզանդիայի մասին։ Արևելահռոմեական կայսրության կազմավորման հենց սկզբից մինչև նրա անկումն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ հայ պատմիչներն առատ տեղեկություններ ունեն։

Անցյալ դարի սկզբներին ֆրանսիացի արևելագետ Մ. Ժ. Սեն-Մարտենը Շ. Լեբոյի «Ստորին կայսրության պատմությունը» (Բյուզանդիայի) աշխատու-

---

—XIII դդ. հայ պատմիչների երկերից քաղված հատվածների ռուսերեն թարգմանությունը։ Այս աշխատությունը թարգմանվել է ֆրանսերեն Essai d'une Histoire de la dynastie des Sassanides d'après les renseignements fournis par les historiens arméniens, par M. K. Patkanian, trad. par M. E. Prud'homme.—Journal Asiatique, VI, t. VII, Paris, 1866, p. 101—238.

[8] J. Markwart. Eranšahr nach der Geographie des Ps. Moses Xorenaci. Berlin, 1901.

[9] A. Christensen. L'Iran sous les Sassanides. Copenhague, 1936, p. 77—79.

[10] История Ирана. Л., 1958, с. 38.

[11] سعید نفیسی ، منابع تاریخ ایران پیش از اسلام مورخین ارمنی ، مجلهٔ شرق ، شماره دوم ، دوره اول ، بهمن ماه ۱۳۰۹ (1891/92)

[12] И. М. Оранский. Введение в иранскую филологию. М., 1960, с. 151. Նա ընդգծում է Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի, Եղիշեի, Ղազար Փարպեցու, Սեբեոսի և «Աշխարհացույցի» նշանակությունը։

թյան վերամշակված հրատարակության առաջաբանում նշում է, որ միայն հայկական և արաբական աղբյուրների օգտագործումով հնարավոր է շարադրել Բյուզանդիայի ամբողջական պատմությունը[13]։

Տարբեր բյուզանդագետներ իրենց աշխատություններում օգտագործել են հայ պատմիչների վկայությունները։ Ն. Ադոնցը Վասիլ I կայսեր ծագման[14], Մավրիկիոս և Կոստանդին V կայսրերի[15] զրույցների և այլ հարցերի մասին ուսումնասիրություններում իր փաստարկներն ամրապնդել է նրանց հաղորդած տվյալներով։

Գ. Շլյումբերժեն[16] X դարի վերջին Բյուզանդիայի առաջխաղացմանը նվիրված աշխատության մեջ օգտագործել է Մատթեոս Ուռհայեցու (առատորեն), Արիստակես Լաստիվերտցու, Կիրակոս Գանձակեցու և Վարդանի վկայությունները։ Բյուզանդիայի հազարամյա պատմությանը նվիրված մենագրության մեջ Գ. Օստրոգորսկին[17] տվյալներ է վերցրել Սեբեոսից, Ասողիկից, Մատթեոս Ուռհայեցուց, ինչպես նաև հայագետների աշխատություններից (Գ. Հովսեփյան, Ն. Ադոնց, Հ. Մանանդյան, Ժ. Լոռան, Ռ. Գրուսե)։

Յ. Կուլակովսկին[18] իր «Բյուզանդիայի պատմություն» աշխատության մեջ օգտագործել է Սեբեոսի[19], Ղևոնդի, Մովսես Կաղանկատվացու և «Աշխարհացույցի» տվյալները։ Բյուզանդիայի արևելյան սահմաններին նվիրված իր հատորի մենագրության մեջ Է. Հոնիգմանը օգտվել է մի շարք հայ պատմական աղբյուրների տեղեկություններից (Հովհան Մամիկոնյան, «Աշխարհացույց», Թովմա Արծրունի, Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Արիստակես Լաստիվերտցի, Մատթեոս Ուռհայեցի, Սամուել Անեցի, Վարդան)։ Սեբեոսի տեղեկությունները առատորեն օգտագործել է բյուզանդագետ Պ. Գուբերը[20]։

Այժմ բյուզանդագետները ձեռքի տակ ունեն մի ամբողջական աշխատություն՝ կատարված Հ. Բարթիկյանի կողմից, որի շնորհիվ կարող են ծանոթանալ Բյուզանդիայի վերաբերյալ հայկական բոլոր աղբյուրների տեղեկություններին (սկսած V—XIII դդ. պատմիչների վկայություններից և Կոստանդնուպոլսի անկմանը հայ մատենագիրների արձագանքներից մինչև վիմական արձանագրություններն ու հիշատակարանները և այլն) հունարեն թարգմանությամբ. ժողովածուն կոչվում է «Բյուզանդիան հայկական աղբյուրներում»[21]։

Հայ պատմիչները անդրադարձել են Բյուզանդիայի պատմության տարբեր դրվագներին, բայց նրանք հատուկ կերպով արձագանքել են Կոստանդնուպոլսի անկմանը, որը թուրքական բարբարոսության հաղթանակն էր Արևելքի քրիստոնյա ժողովուրդների քաղաքակրթության դեմ։ Այնքան շատ հայ հեղի-

---

[13] Histoire du Bas-Empire, nouvelle édition, revue entièrement, corrigée et augmentée d'après les historiens orientaux par M. de Saint-Martin. T. I, Paris, 1824. p. X.

[14] N. Adontz. L'age et l'origine de l'empereur Basile I (867—886).—Etudes Arméno-Byzantines, Lisbonne, 1965.

[15] Idem. Les Legendes de Maurice et de Constantin V, empereurs de Byzance.—Etudes Arméno-Byzantines, Lisbonne, 1965.

[16] G. Schlumberger. L'Epopée byzantine à la fin du dixième siècle, Paris 1905.

[17] G. Ostrogorsky. Geschichte des Byzantinischen Staates. München, 1940.

[18] Ю. Кулаковский. История Византии. I—III, Киев, 1910—1915.

[19] Սեբեոսի տեղեկություններն օգտագործվել են նաև Հերակլ կայսեր շրջանի և պատերազմների հետազոտման համար. E. Gerland. Die persischen Feldzüge des Kaisers Heraklelos. Leipzig, 1894; A. Pernice. L'Imperatore Eraclio. Firenze, 1905.

[20] E. Honigmann. Die Ostgrenze des Byzantinischen Reiches. Bruxelles, 1935, P. Goubert. Byzance avant l'Islam. T. I, Byzance et l'Orient. Paris, 1951, p. 191—220.

[21] Χρ. Μ. Μπαρτικιαν. Το Βυζαντιον εις τὰς ἀρμενικὰς πηγάς, Θεσσαλονίκη, 1981.

նակներ են արձագանքել այդ տխուր փաստին, որ Հ. Անասյանը[22] մի ամբողջ աշխատություն է հատկացրել այդ նյութին։ Պատահական չէ, որ Բյուզանդիայի եռահատոր պատմության մեջ (ուր հատուկ նշված է հայ պատմիչների վկայությունների նշանակությունը Բյուզանդիայի ընդհանուր պատմության համար) բյուզանդագետ Զ. Վ. Ուդալցովան Կոստանդնուպոլսի անկմանը հատկացված գլուխը վերջացնում է Աբրահամ Անկիրացու ողբով[23]։

Բյուզանդագետներն այժմ էլ օգտագործում են հայ պատմիչների վկայությունները. այսպես, օրինակ, հույն բյուզանդագետ Ա. Ստրատոսի[24] Բյուզանդիայի VII դարի պատմությանը նվիրված վերջին տասնամյակներում լույս տեսած աշխատության մեջ առատորեն գործածված են հայկական աղբյուրները։

Հայկական աղբյուրները հատկապես կարևոր են Վրաստանի (Վիրք, Լազիկա), արևելյան Անդրկովկասի (Շիրվան, Աղվանք), ինչպես նաև Միջին Ասիայի պատմության ուսումնասիրման համար։ Վրաց տարեգրության ֆրանսերեն թարգմանության մեջ Մ. Բրոսեն[25] օգտագործել է գրեթե բոլոր հայ պատմիչներին՝ իր ճոխ ծանոթագրությունները գրելիս։ Նշվել է հայ պատմիչների երկերի[26] նշանակությունը, ինչպես նաև հայկական ձեռագրերի հիշատակարանների[27] կարևորությունը վրաց պատմության հարցերը լուսաբանելիս։ Հայկական որոշ աղբյուրներ հատկապես անհրաժեշտ են դավանաբանական հարցեր հետազոտելիս («Գիրք թղթոց», Ուխտանես)։ Նույնքան հարկավոր են հայ աղբյուրները նաև Աղվանքի պատմության ուսումնասիրման ժամանակ։ Աղվանքին նվիրված Կ. Տրևերի մենագրության[28] կարևորագույն աղբյուրը Մովսես Կաղանկատվացու պատմությունն է։

Ինչ վերաբերում է Միջին Ասիային, ապա հայկական աղբյուրների նշանակությունը նրա պատմության հետազոտման համար ընդգծվում է տարբեր բնույթի աշխատություններում[29] և հենց հայկական աղբյուրների կարևորությանը նվիրված մենագրության մեջ[30]։

Արաբական խալիֆայության երևան գալն անմիջապես իր արձագանքը գտավ հայ պատմագրության էջերում։ Սեբեոսը ուղղակի ժամանակակից է արաբների առաջին արշավանքներին և պատահական չէ, որ Հ. Հյուբշմանը[31] հատուկ ուսումնասիրությամբ քննության առավ նրա տեղեկությունները այդ հարցի շուրջը։ Մի շարք հայ պատմիչների մոտ (Սեբեոս, Ղևոնդ, Թովմա Արծրունի, Հովհաննես Դրասխանակերտցի, Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Սա-

---

22 Հ. Անասյան. Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին. Երևան, 1957։

23 История Византии (коллектив авторов). Т. III, М., 1967, с. 198.

24 Andreas N. Stratos. Byzantium in the seventh Century. I, II, III, Amsterdam, 1968, 1972, 1975.

25 Histoire de la Géorgie, trad. par M. Brosset. Ie partie, I—II, Petersbourg, 1849—1850.

26 არაქელ დავრიჟეցის ცნობები საქართველოს შესახებ. თარგმანი, შესავალი და კომენტარები კარლო კუციასი, თბილისი, 1974.

27 ა. აბდალაძე, სომხურ ხელნაწერთა ანდერძნამაგები და მათი მნიშვნელობა XII - XIII საუკუნეთა საქართველოს ისტორიისათვის. „ქართული წყაროთმცოდნეობა", IV, თბილისი, 1973.

28 К. В. Тревер. Очерки по истории и культуре Кавказской Албании. М.—Л., 1959.

29 К. В. Тревер. Кушаны, хиониты и эфталиты по армянским источникам IV—VII вв.—Советская археология, т. XXI, М.—Л., 1954, с. 131—147; Б. Г. Гафуров. Таджики: Древнейшая, древняя и средневековая история. М., 1972, с. 196.

30 Л. Х. Тер-Мкртчян. Армянские источники о Средней Азии, V—VII вв. М., 1979.

31 H. Hübschmann. Zur Geschichte Armeniens und der ersten Kriege der Araber. Aus dem Armenischen des Sebeos. Leipzig, 1875.

մուել Անեցի, Վարդան և այլք) առատ տեղեկություններ կան Արաբական խալիֆայության ներքին և հատկապես արտաքին քաղաքական կյանքի և պատերազմների վերաբերյալ։

Արաբա-բյուզանդական երեքդարյա գոտեմարտը, որի ասպարեզն էին դարձել Արևմտյան Հայաստանի որոշ գավառներ և ամբողջ Փոքր Հայքը, նկարագրված է Ա. Վասիլևի արժեքավոր ուսումնասիրության մեջ[32], ուր հայկական աղբյուրները բավարար չափով օգտագործված են (Թովմա Արծրունի, Հովհաննես Դրասխանակերտցի, Ասողիկ, Սամուել Անեցի, Մատթեոս Ուռհայեցի, Վարդան)։

Հայ պատմիչների երկերը կարևոր աղբյուր են նաև արաբա-խազարական պատերազմների հետազոտման համար։ Խազարների պատմության հեղինակ Մ. Արտամոնովը[33] նշում է, որ հայ պատմիչները (Ղևոնդ, Մովսես Կաղանկատվացի, Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ) արժեքավոր են արաբա-խազարական պատերազմների ուսումնասիրման, իսկ նախորդող աղբյուրները (Եղիշե, Մովսես Խորենացի, «Աշխարհացույց», Սեբեոս)՝ հենց խազարների պատմության հետազոտման տեսակետից։

Արաբական խալիֆայության մեջ գտնվող, Հայաստանին սահմանակից երկրների պատմության ուսումնասիրման համար ևս հայ պատմիչները տեղեկություններ են տալիս։ Մ. Կանարը[34] Ջազիրայի ու Սիրիայի Համդանիների պատմությանը նվիրված իր մենագրության մեջ օգտագործել է Թովմա Արծրունու, Մատթեոս Ուռհայեցու և այլոց երկերը։

Հատկապես կարևոր են հայկական աղբյուրները քրիստոնյա-մահմեդական կրոնական վեճերի մասին հաղորդած նյութերով, ինչպես, օրինակ, Օմար II խալիֆայի և Լևոն III Իսավրացու երկու նամակները, որ պահպանվել են Ղևոնդի մոտ[35]։ Հայտնաբերվել է նաև Լևոնի նամակի լատիներեն տարբերակը[36], որն արդեն անժխտելիորեն ապացուցում է այդ նամակների վավերականությունը[37]։ Կազմված է իսլամի մասին հայ մատենագիրների տեղեկությունների մանրամասն մատենագիտությունը, որ հրատարակված է Հռոմում[38]։ Մուհամմադի կենսագրությունը և իսլամի հարցերը ուշադրության առարկա են եղել հայ մատենագրության մեջ[39]։

Սելջուկ-թուրքերի ասպարեզ գալու և նրանց կատարած ավերածությունների մասին հաղորդում են մի շարք հայ պատմիչներ (Արիստակես Լաստիվերտցի, Մատթեոս Ուռհայեցի, Սամուել Անեցի, Վարդան)։ Վկայություն կա, որ Հովհաննես Սարկավագը (մեռ. 1129) կազմել է սելջուկների պատմությունը, որը մեզ չի հասել, սակայն նրանից քաղված տեղեկություններ կան Վենետիկի Մխիթարյանների մատենադարանի մի ձեռագրում[40]։ Հայ պատմիչներից Մխիթար Անեցու տեղեկություններն օգտագործվել են Տ. Գուլումճյանի կողմից՝ XI դարի իրադարձությունները հետազոտելիս[41]։

---

32 A. Vasiliev. Byzance et les Arabes, t. I, Bruxelles, 1935 (1959). T. II, p. I, 1968, t. II, p. II, 1950.

33 М. М. Артамонов. История хазар. Л., 1962, с. 17.

34 M. Canard. Histoire des Hamdanides de Jazirah et de Syrie. Paris, 1951.

35 Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց. Պետերբուրգ, 1887, էջ 42—98։

36 A. Jeffry. Ghevond's text of the correspondence between Omar II and Leo III.—Harvard Theological Review, XXXVII (1944), p. 273—275.

37 Բանն այն է, որ ոմանք համարում էին, թե դրանք Ղևոնդի կողմից են հնարված։

38 A. Ter-Ghevondian. Auteurs Chretiens Arméniens (VIIe — XIVe s.). Bibliographie du dialogue islamo-chrétien.—Islamochristiana, 6. Roma, 1980, p. 279—287.

39 Տե՛ս Բ. Կյուլեսերյան. Իսլամը հայ մատենագրության մեջ. Վենետիկ, 1930։

40 Հ. Ամատյան. Հայոց անձնանունների բառարան. Գ, Երևան, 1946, էջ 572։

41 Տ. Գուլումճյան. Մխիթար Անեցին Ղազնավյանների և Սելջուկյանների մասին.— ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1972, № 4։

Ժամանակի տեսակետից հայ պատմիչները ամենից վաղ ուշադրության սուրբկա են դարձել խաչակրաց պետությունների պատմության ուսումնասիրման բնագավառում։ Դեռևս անցյալ դարի սկզբից հայ պատմիչներին և հատկապես Մատթեոս Ուռհայեցուն նվիրված մի քանի ուսումնասիրություններ են լույս տեսել։ Շահան Ջրպետը, Է. Դյուլորիեն, Ֆ. Նևը, Հ. Պետերմանը հետազոտությունների մի շարք հրատարակեցին[42], իսկ դարի վերջում, «Խաչակրաց պատմիչների ժողովածու» բազմահատոր մատենաշարում իր տեղը գրավեց մի հատուկ հատոր՝ նվիրված հայ պատմիչների տեղեկություններին[43]։ Իսկ մեր դարում Ժ. Լորանի, Ռ. Գրուսեի, Ս. Ռանսիմենի, Ա. Լյուդերսի և Մ. Ա. Զաբորովի աշխատություններում[44] շեշտված է, թե ինչպիսի նշանակություն ունեն Մատթեոս Ուռհայեցու, Սամուել Անեցու, Կիրակոս Գանձակեցու, Վարդանի, Սմբատ սպարապետի և այլոց երկերը՝ խաչակրաց պետությունների (հատկապես Եդեսիայի կոմսության, Անտիոքի իշխանության) քաղաքական կյանքը, ներքին կառուցվածքը, տնտեսական վիճակը և հասարակական հարաբերությունները քննելիս։

XIX դարի առաջին կեսից ուսումնասիրողները ուշադրություն սևեռեցին հայ պատմիչների երկերին, որպես մոնղոլների պատմության հետազոտման համար խիստ արժեքավոր աղբյուրների։ Հայազգի Ա. Կ. դ'Օհսոնը[45] մոնղոլների պատմությանը նվիրված իր քառահատոր մենագրության մեջ օգտվել է հայ պատմիչներից (Հեթում (Հայթոն), Կիրակոս), ինչպես նաև Մ. Չամչյանից[46]։ Է. Դյուլորիեն այս հարցին նվիրված իր աշխատության[47] մեջ ընդգծում է Կիրակոս Գանձակեցու, Վարդանի, Ստեփանոս Օրբելյանի, Սմբատ սպարապետի (Գունդստաբլ), Հեթում պատմիչի երկերի անհրաժեշտությունը մոնղոլների պատմության, բարքերի, զորքի, վարչական համակարգի, հարկային քաղաքականության և կրոնական ավանդությունների ուսումնասիրման համար։ Ի դեպ, պետք է ավելացնել, որ Կիրակոս Գանձակեցին բազմաթիվ մոնղոլերեն բառեր է հիշում, որոնք անտարակույս կարևոր են այդ լեզվի հին աստիճանը ուսումնասիրելիս։

Հայ պատմիչների տեղեկությունները մոնղոլների մասին հատուկ հետազոտության առարկա դարձան Ք. Պատկանյանի մոտ[48], որը քննության է

---

[42] Matthieu Eretz. Notice de deux manuscrits arméniennes contenant l'Histoire de Matthieu Eretz et extrait de cette histoire, relatif à la première Croisades... par Chahan de Cirbied. Paris, 1812; E. Dulaurier. L'Histoire des Croisades d'après les croniques arméniens.—Revue de l'Orient et de l'Algérie, t. VIII, Paris, 1858; F. Nève. Les chefs belges de la première Croisade d'après les historiens arméniens. Bruxelles, 1859; H. Petermann. Beiträge zu der Geschichte der Kreuzzuge aus armenischen Quellen. Abh. der kon. Ak. der Wiss. zu Berlin, 1860.

[43] Recueil des historiens des Croisades. Documents arméniens, I, Paris, 1869.

[44] J. Laurent. Des Grecs aux croisés. Etude sur l'histoire d'Edesse entre 1081 et 1098. Byzantion. I, 1924; R. Grousset. Histoire des Croisades. I—III, Paris, 1934—1936; S. Runciman. A History of the Crusades. I—III, Cambridge, 1951—1954; A. Lüders. Die Kreuzzuge im Urteil syrischer und armenischer Quellen. Berlin, 1964; М. А. Заборов. К вопросу о значении известий восточных современников крестовых походов.—«Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 3։

[45] A. C. d'Ohsson. Histoire des Mongols depuis Tchinguiz-khan jusqu'a Timour Bey ou Tamerlan. V. 1—4, La Haye-Amsterdam, 1834—1835.

[46] Le Flor des estoires de la Terre d'Orient (Flos Historiarum Terre Orientis). Rec. d. Hist. d. Crois., Documents arméniens, II, p. 111—253, 255—363; M. Chamich History of Armenia, I, II, Calcutta, 1827.

[47] Les Mongols d'après les sources arméniens. Fragments traduits sur les textes originaux par E. Dulaurier.—Journal Asiatique, 1858, t. XI, 1860, t. XVI.

[48] История монголов по армянским источникам, пер. К. Патканова. I, II, СПб., 1873, 1874.

առնում նրանց պատմության տարբեր երևույթները՝ ցույց տալով մոնղոլների հարաբերությունները Հայաստանի հետ։ Նրա աշխատության երկրորդ հատորի վերջում կա Ջինգիզյանների տոհմածառն ըստ հայկական աղբյուրների։ Բելգիացի արևելագետ Ֆ. Նևը[49] հայ գրականությանը նվիրված իր աշխատության մեջ մի ամբողջ գլուխ ունի մոնղոլների մասին հայկական աղբյուրների տեղեկությունների վերաբերյալ։

Բ. Շպուլերը[50] իր «Մոնղոլները Իրանում» աշխատության մեջ օգտվել է Կիրակոս Գանձակեցու, Վարդանի, Մաղաքիա աբեղայի, Ստեփանոս Օրբելյանի, Վահրամ Ռաբունու, Մխիթար Այրիվանեցու, Սմբատ սպարապետի և Հեթում պատմիչի տվյալներից։ Հայ պատմական աղբյուրների նշանակությունը մոնղոլների պատմության հետազոտման համար ընդգծել են Ֆ. Կրաուզեն[51] և Գ. Ալթունյանը[52]։ Ավելի ուշ այդ հարցին անդրադարձել է նաև Ա. Գալստյանը[53]։

Լանկ Թամուրի վայրագ ասպատակությունները և XV դարի առաջին կեսի դեպքերն իրենց արձագանքն են գտել այդ իրադարձությունների ականատես ու ժամանակակից Թովմա Մեծոփեցու «Պատմութիւն Լանկ Թամուրայ» երկում։ Ֆ. Նևը և Վ. Մինորսկին հատուկ ուսումնասիրություններում շեշտում են նրա վկայությունների պատմական արժեքը[54]։

Հայկական աղբյուրները կարևոր նշանակություն ունեն Իրանի գրեթե բոլոր պատմական ժամանակաշրջանների համար, սակայն հատկապես արժեքավոր են սասանյան շրջանի և XVI—XVIII դդ. պատմությանը վերաբերող տվյալները։ Թեև հայ պատմագրությունը XVI դարում չի տվել պատմական ակնառու գործեր, այլ եղել են միայն մանր ժամանակագրություններ ու հիշատակարաններ[55], այսուհանդերձ XVII դարն այնքան ճոխ պատմագրություն ունի, որ կարող է ծածկել նախորդ դարի պակասը։

Հայ պատմիչների երկերի նշանակությունը ընդգծվում է Իրանի պատմության նոր ուսումնասիրություններում թե՛ XVII և թե՛ XVIII դդ. Իրանի պատմության համար[56]։ Հատկապես ուշադրության են արժանացել XVII դարի պատմիչ Առաքել Դավրիժեցին, ինչպես նաև Զաքարիա Քանաքեռցին, որոնք հարուստ վկայություններ ունեն Իրանի քաղաքական կյանքի (հատկապես Շահ Աբբասի շրջանի) վարչական, հարկային համակարգի և առևտրի ու արհեստների մասին։ Առաքել Դավրիժեցու երկի պատմական արժեքը հատուկ մենագրությամբ գնահատել է Լ. Դանեղյանը[57]։

---

[49] F. Nève. Les sources arméniens pour l'Histoire des Mongols en Asie.—L'Arménie Chrétienne et sa litterature, Louvain, 1886, p. 371—382.

[50] B. Spuler. Die Mongolen in Iran. Berlin, 1955, S. 470—472.

[51] F. Krause. Das Mongolische Reich nach der Darstellung des Armeniers Haithon. Festschrift fur F. Hirth.—Ostasiatische Zeitschrift, VIII (1920), S. 238—267.

[52] G. Altunian. Die Mongolen und ihre Eroberungen in kleinasiatischen Landern im XIII Jahrhundert. Berlin, 1911 (Hist. Studien, nrsg. v. Emil Ebering, Heft 91)

[53] Армянские источники о монголах, пер. А. Галстяна. М., I, 1962.

[54] F. Nève. Exposé des guerres de Tamerlan et de Schah Rokh, d'après la Chronique arménienne inédite de Thomas de Medzop. Bruxelles, 1860. V. Minorsky. Thomas of Metsop on the Timurid-Turkman wars, to prof. M. Shafi. Lahore, 1955.

[55] *Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ., Երևան, Ա, 1951, էջ 125—177. Բ, 1956, էջ 225—255։ Լ. Դանեղյան. Մանր ժամանակագրությունները որպես Իրանի պատմության աղբյուր.—ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ. գիտական ինֆորմացիայի սեկտոր, Ա մատենաշար, Իրանագիտության հարցեր. Երևան, 1978։ XVI դարի հիշատակարանների մասին տե՛ս* М. Зулалян. Армения в первой половине XVI в. М., 1971, с. 5—6.

[56] История Ирана, с древнейших времен до конца 18 в., Л., 1958, с. 269—270, 304.

[57] *Լ. Դանեղյան. Առաքել Դավրիժեցու երկը որպես սեֆյան Իրանի XVII դարի պատմության սկզբնաղբյուր. Երևան, 1978։*

Լ. Խաչիկյանի[58] հատուկ ուշադրությանն է արժանացել XVII դարի հայ վաճառական Հովհաննես Ջուղայեցու հաշվեմատյանը, որը վերջերս ամբողջովին հրատարակվեց[59]։ Արժեքավոր է նաև Զաքարիա Ագուլեցու օրագրությունը, որը վաղուց է լույս ընծայվել։ Դրանք վկայությունն են այն համաշխարհային առևտրական գործունեության, որ XVII—XVIII դդ. ծավալում էին հայ վաճառականները, հասնելով, մի կողմից, մինչև Տիբեթ (Հովհաննես Ջուղայեցի), իսկ մյուս կողմից՝ մինչև Արևմտյան Եվրոպա (Զաքարիա Ագուլեցի)։ XVIII դարի մի ուրիշ վաճառական և հասարակական գործիչ՝ Եղիա Կարնեցի Մուշեղյանը թողել է մեծ քանակությամբ նամակներ, հաշվեմատյան, բառարաններ և այլ բնույթի ձեռագրեր[60], որոնք ուսումնասիրման մեծ հեռանկարներ ունեն։

Իրանի XVIII դարի պատմության համար միշտ շեշտվում է Աբրահամ Կրետացու, Եսայի Հասան-Ջալալյանի, Պետրոս դի Սարգիս Գիլանենցի երկերի նշանակությունը և արժեքը տարբեր աշխատություններում[61]։

Ս. Տեր-Ավետիսյանը հայ պատմիչների տեղեկությունների հիման վրա շարադրել է Նադիր Շահի երևան գալու և շահ դառնալու պատմությունը[62]։ Իսկ Թ. Ավդալբեկյանը հայ պատմիչներ Եսայի Հասան-Ջալալյանի, Առաքել Դավրիժեցու, Խաչատուր Ջուղայեցու և այլոց տվյալների հիման վրա գրել է Պարսկաստանի տնտեսական կյանքի որոշ երևույթների մասին[63]։

Հայ պատմիչների մեջ, որպես բացառիկ երևույթ, պետք է հիշել Խաչատուր Ջուղայեցու «Պատմութիւն Պարսից» երկը, որը միայն Պարսկաստանի պատմությանն է վերաբերում։

Հայ պատմագրության տվյալները ոչ պակաս կարևոր են նաև Թուրքիայի պատմության համար[64]։ Իկոնիայի սելջուկյան սուլթանության պատմության հեղինակ Վ. Ա. Գորդլևսկին[65] նշում է Մատթեոս Ուռհայեցու երկի կարևորությունը այդ հարցի ուսումնասիրման ժամանակ։

Խոսելով օսմանյան պետության պատմության աղբյուրների մասին, առաջին հերթին պետք է հիշել Երեմիա Չելեպի Քյոմյուրճյանին (1637—1695) իր մի քանի հրատարակված և դեռ չհրատարակված աշխատություններով։

Կարևոր են նաև Սիմեոն Լեհացու ուղեգրությունը և Գրիգոր Դարանաղցու ժամանակագրությունը։ Այստեղ պետք է կրկին հիշել Առաքել Դավրիժեցուն, որը կարևոր տեղեկություններ ունի նաև Թուրքիայի մասին։

Շահեկան են հայ պատմիչների տեղեկությունների հիման վրա շարադրված ուսումնասիրությունները։ Թ. Ավդալբեկյանը[66] Հակոբ Կարնեցու և այլոց տվյալների հիման վրա հետազոտել է գլխահարկի դրությունը Թուրքիայում։

---

58 L. Khatchikian. The Ledger of the Merchant Hovhannes Joughayetsi.— Journal of the Asiatic Society. VIII, № 3, 1966, p. 153—186.

59 Հովհաննես Տեր-Դավթյան Ջուղայեցու Հաշվետումարը. Երևան, 1984։

60 Եղիա Կարնեցու Դիվանը. Երևան, 1968։

61 Տե՛ս История Ирана, с. 304.

62 С. Тер-Аветисян. Походы Тамас-Кули хана (Надир шах) и избрание его шахом в описании Акопа Шамахеци. Тифлис, 1932.

63 Թ. Ավդալբեկյան. Ար-ի-քուրան ջրանցքը Պարսկաստանում ու համանուն աբիքուրան հարկը (հայ աղբյուրների համաձայն).—«Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 1։

64 Ա. Փափազյան. Հայ պատմիչները սելջուկ թուրքերի և օսմանյան կայսրության մասին (XI—XVIII դարեր). Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, ժ, Թուրքիա. Երևան, 1979, էջ 214—241։

65 В. А. Гордлевский. Государство Сельджукидов Малой Азии. М.—Л., 1941, с. 12.

66 Թ. Ավդալբեկյան. Գլխահարկը Թուրքիայում հայ պատմագրության տվյալներով.—«Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 1։

Մ. Զուլալյանն[67] ուսումնասիրել է մանկահավաքը Թուրքիայում և ջալալիների շարժումը՝ հենվելով հիշատակարանների և Առաքել Դավրիժեցու ու Գրիգոր Դարանաղցու պատմական երկերի վրա։

Թուրք-լեհական պատերազմների հետազոտման համար արժեքավոր են Օրենա Կամենացու[68] և Հովհաննես Կամենացու[69] պատմական երկերը։ Ն. Ս. Ռաշրան Հովհաննես Կամենացու պատմության ռուսերեն հրատարակության[70] առթիվ գրում է. «Հովհաննեսը շահեկան փաստեր է նկարագրել թուրքերի և թաթարների դեմ մղվող պայքարում ժողովրդական զանգվածների մասնակցության վերաբերյալ և ուրիշ աղբյուրներից ոչ հայտնի հերոսական հետաքրքրիր միջադեպեր՝ թշնամու զգալիորեն գերակշռող ուժերի դեմ ուկրաինական ու լեհական ռազմիկների մաքառումից»[71]։

Հայ պատմիչները կարևոր տեղեկություններ ունեն նաև Եթովպիայի (Հապեշստան) մասին։ Հ. Թոփուզյանը[72] Եթովպիայի քաղաքների վերաբերյալ իր ուսումնասիրության մեջ նշում է Հովհաննես Թյությունճիի[73], Ավետիքի[74] և Հովհաննես Թովմաճյանի[75] երկերի նշանակությունը Եթովպիայի XVII.—XVIII դդ. պատմության հետազոտման բնագավառում։ Հովհաննես եպիսկոպոս Թյությունճին 1678-ին այցելել է Եթովպիա քաղաքական առաքելությամբ։ XVII դարում Եթովպիա է գնացել նաև Ավետիք Տիգրանակերտցի Բաղդասարյանը, իսկ վաճառական Հովհաննես Թովմաճյանը Եթովպիա է եկել 1762-ին և եղել է արքունի գանձապահ։

Հետաքրքրական տեղեկություններ են պարունակում հայկական աղբյուրները նաև Հնդկաստանի վերաբերյալ։ Մեզ է հասել միջնադարյան մի ուղեցույց Հնդկաստանի քաղաքների մասին[76]։ Գ. Խոջամալյանն (1720—1780)

---

67 Մ. Զուլալյան. «Դեվշիրմե»-ն (մանկահավաքը) Օսմանյան կայսրության մեջ ըստ թուրքական և հայկական աղբյուրների.—«Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 2—3։ Նույնի՝ Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ. Երևան, 1966։

68 Ղ. Ալիշան. Կամենից. Վենետիկ, 1896, էջ 68—109՝ բնագիրը հայատառ ղփչաղերեն։

69 Յովհաննէս Կամենացի. Պատմութիւն պատերազմին Խոթինու. Երևան, 1964։

70 «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 2, էջ 258—286։

71 Н. С. Рашба. Новый источник по истории борьбы украинского и польского народов против турецко-татарской агрессии.—История СССР. М., 1959, № 5, с. 170—172.

72 O. Kh. Topouzian. Quelques aspects des villes ethiopiennes d'après les sources arméniennes du XVIIème, XVIIIème, et XIXème siècles. Accademia Nazionale dei Lincei. IV Congresso Internazionale di Studi Etiopici. T. I, Roma, 1974, p. 793—801.

73 Ա. Ալպոյաճյան. Հայ եպիսկոպոսի մը առաքելությունը ի Հապեշստան ԺԷ դարուն. Կահիրե, 1946։ Карапет (Тер Мкртчян). Путешествие архиепископа Хованеса в Абиссинию.—Христианский Восток. СПб., т. III, вып. I, 1914, с. 6—16.

74 Վասն որ կամի ի Հէպէշին երկիրն գնալ (հրատ. Ղ. Ալիշանի).—«Բազմավէպ», 1897, էջ 459—463։ Un viaggiatore armeno traverso l'Abissinia, per cura del P. L. Alishan (trad. E. Teza). Venezia, 1897 (Dagli Atti del R. Istituto Veneto di scienze, lettere ed arti, T. VIII, Serie VII, 1896—1897); Армянский памятник XVII-го века с данными о географии Абиссинии и северной Африки вообще. Itinerarium Аветика Багдасаряна, чтеца из Тигранакерта, пер. Г. А. Халатьянц. М., 1898.

75 The visit to Ethiopia of Yohannes Tovmacean, an armenian Jeweller, in 1754—1766, translated by V. Nersessian.—Journal of Ethiopian Studies, vol. XV (1982), p. 79—104.

76 Անուանք քաղաքացն Հնդկաց և Պարսից. Գիրք աշխարհաց. Ամստերդամ, 1668, էջ 77—88։ Եղել են նաև հրատարակություններ 1683, 1698, 1752 թթ.։ Տե՛ս նաև «Բազմավէպ». 1882, էջ 315—317։ Noms de quelques villes de l'Inde et de la Perse.—«Բազմավէպ», 1882, էջ 311—313, Zeitschrift fur Armenische Philologie. Marburg, Bd. I, 1901/02, S 195—198 (F. N. Finck).

ունի Հնդկաստանի պատմությանը նվիրված մի աշխատություն[77], ուր նկարագրված են XIV դարից մինչև 1764 թ. ընկած ժամանակաշրջանի աշխարհագրությունը, քաղաքական անցքերը և այլ երևույթներ։

Հայկական աղբյուրները որոշ տեղեկություններ ունեն նաև Հեռավոր Արևելքի երկրների մասին։ Կոստանդ Ջուղայեցին[78] (XVII դար) հիշատակում է Ինդոնեզիական կղզիների (Ջավա) և Ֆիլիպինների քաղաքները (Ջաքարտա, Մանիլա և այլն)։ Չինաստանի մասին խոսում են Ղևոնդը, Ստեփանոս Տարոնեցին (արաբա-չինական պատերազմների առթիվ)։

Հայկական աղբյուրները տեղեկություններ ունեն Արևելքի տարբեր երկրների և ժամանակաշրջանների մասին և այդ հարուստ նյութը դեռ կարոտ է ուսումնասիրման։ Մեր այս հոդվածը այդ նյութի մասին սոսկ մատենագրական բնույթի մի հանրագ ակնարկ է։

СТРАНЫ ВОСТОКА НА СТРАНИЦАХ АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ V—XVIII вв.

Доктор ист. наук А. Н. ТЕР-ГЕВОНДЯН

Резюме

Одно из древнейших государств, о котором армянские историки сообщают важные сведения, это Мидия. В своей «Истории Мидии» И. Дьяконов использовал данные автора V в. Мовсеса Хоренаци.

М. Ж. Сен-Мартен, Г. Раулинсон и Н. Дибвойс использовали данные армянской историографии для исследования истории Парфянского (Аршакидского) Ирана. Сведения армянских источников—Агатангелос, Фавстос Бузанд, Елише, Лазар Парпеци, Мовсес Хоренаци и др.—о Сасанидском Иране изучены К. Патканяном в особом исследовании, которое было переведено на французский. Работа Й. Маркварта об исторической географии Ирана (Ераншахра) целиком основана на данных армянской Географии VII в. (Ашхарацуйца). Эти армянские источники использованы А. Христенсеном, автором монографии о Сасанидах.

Сочинения армянских историков—Себеоса, Степаноса Таронеци, Асолика, Маттеоса Урхаеци (Эдесского) и др.—использованы в монографиях Г. Шлюмберже, Н. Адонца, Г. Острогорского, Ю. Кулаковского, Э. Хонигмана и в наше время А. Стратоса, а также в трехтомной «Истории Византии» (М., 1967). Существует полный греческий перевод извлечений из всех средневековых армянских источников, выполненный Р. Бартикяном.

Армянские источники очень важны и для исследования истории Грузии, Восточного Закавказья (Албания, Ширван) и Средней Азии. Целый ряд армянских историков—Гевонд, Товма Арцруни, Ованес Драсханакертци, Самуел Анеци, Вардан и др.—сообщают интересные сведения об арабском халифате, использованные в монографиях А. Васильева («Византия и арабы», о войне между Византией и арабами), И. Артамонова («История хазар», о войне арабов с хазарами) и М. Канара (о Джазире при Хамданидах). Сведения армянских историков об исламе исследованы в библиографическом труде А. Тер-Гевондяна.

Армянским историкам Аристакесу Ластивертци, Маттеосу Урхаеци и др. принадлежат богатые сообщения о варварских злодеяниях турок-сельджуков во многих стра-

---

[77] Թ. Խոջամալյան. Պատմութիւն Հնդեաց. Կալկաթա, 1849։ Р. Абраамян. Армянские источники XVIII в. об Индии. Ереван, 1968.

[78] Կոստանդ Ջուղայեցի. Յաղագս մահառականութիւն ուսանելոյ. Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 5994. էջ 3։

нах Передней Азии. Особое значение имеют армянские историки—Маттеос Урхаеци, Самуел Анеци, Киракос Гандзакеци, Вардан, Смбат спарапет—для обследования истории государств крестоносцев (особенно Антиохийского княжества и Эдесского графства), важность чего подчеркивают Э. Дюлорье, Ф. Нев, Х. Петерман, Ж. Лоран, Р. Груссе, С. Рансимен, А. Людерс, М. Заборов и др.

К. Патканян и Э. Дюлорье в особых исследованиях изучили важные сообщения армянских историков о монголах. Эти сведения были использованы в работах А. К. Д'Оссона, Ф. Нева, Б. Шпулера и др. Сообщения армянских источников—Аракел Даврижеци, Закария Канакерци, Ованес Джугаеци—важны и для истории Ирана XVI—XVIII веков, что подчеркивается в «Истории Ирана» (Л., 1958). Они дают интересные сведения и по истории Османской Турции. Ряд трудов армянских историков (Оксент Каменаци, Ованес Каменаци) были использованы для изучения турецко-польских войн. Армянские путешественники XVII—XVIII вв. Ованес Тютюнджи, Аветик и Ованес Товмаджяны сообщают важные сведения об Эфиопии, а Г. Ходжамалян (XVIII в.)—об Индии.